ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՋՐԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

23 .12.2014 թ.

Հեռ. (255) 6-03-23

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ջրաշեն համայնքի ավագանու 20.12.2014թ թիվ 29, 30 և 31 որոշումները:

Առդիր 4 թերթ:

*Համայնքի ղեկավար՝* Վ. ՌՒՌՈՒՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի*
*Ջրաշենի համայնք, 8 Փ. 32, Հեռ. (255)6-03-23*

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 դեկտեմբեր 2014 թվականի N 29

## ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 3-րդ կետով հաստատել 2015թ. համայնքի բյուջեն ըստ եկամուտների.

Վարչական բյուջեի մասով՝ 70644.4 հզ.դր.
Ֆոնդային բյուջեի մասով՝ 68318.2 հզ.դր.
Ընդամենը՝ 138962.6 հզ.դր.

Կողմ (6) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ՀՈՒՍԻԿ ԹՈՎՄԱՍՅԱՆ
ՋԱՎԵՆ ՏՈՆԻԿՅԱՆ
ԿԱՐԱՊԵՏ ՈՒՌՈՒՍՅԱՆ
ՀՐԱՉՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՄԱՐՏԻՆ ԴԱՎԹՅԱՆ
ՀԱՅԿ ԽԱԼԱԹՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՈՒՌՈՒՍՅԱՆ

Հավելված
Ջրաշեն գյուղական համայնքի ավագանու
2014 թվականի դեկտեմբերի 20 -ի N 30 որոշման

# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 14 :
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (հազար դրամ) |
|---|---|---|
| Համայնքի ղեկավար | 1 | 280.0 |
| Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 130.0 |
| Համայնքի ղեկավարի օգնական | 1 | 110.0 |
| Աշխատակազմի քարտուղար | 1 | 190.0 |
| Աշխատակազմի գլխավոր մասնագետ | 1 | 145.0 |
| Աշխատակազմի առաջատար մասնագետ - հաշվապահ | 1 | 135.0 |
| Աշխատակազմի առաջատար մասնագետ | 1 | 135.0 |
| Աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ | 3 | 110.0 |
| Աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետ | 1 | 90.0 |
| Տեխ. սպասարկման անձնակազմ | | |
| Վարորդ | 1 | 110.0 |
| Հավաքարար | 1 | 75.0 |
| Բանվոր | 1 | 75.0 |
| Ընդամենը | 14 | 1805.0 |

Համայնքի ղեկավար՝ Վահան Ուռուսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի*
*Ջրաշեն համայնք, 8 Փ. 32, Հեռ. (255)6-03-23*

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 դեկտեմբեր 2014 թվականի N 30

## ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ, ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ և 26-րդ կետերով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60-րդ և 72-րդ հոդվածներով, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1 կետի բ ենթակետի համայնքի ավագանին
ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել Ջրաշենի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2014թ. հունիսի 23-ի թիվ 14 որոշումը:
3. Աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահի պաշտոն զբաղեցնող Անաստաս Հակոբյանին վճարել 5%-ի չափով հավելավճար:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ (6) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ՀՈՒՍԻԿ ԹՈՎՄԱՍՅԱՆ
ՋԱՎԵՆ ՏՈՆԻԿՅԱՆ
ԿԱՐԱՊԵՏ ՈՒՌՈՒՍՅԱՆ
ՀՐԱՉՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՄԱՐՏԻՆ ԴԱՎԹՅԱՆ
ՀԱՅԿ ԽԱԼԱԹՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՈՒՌՈՒՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի*
*Ջրաշեն համայնք, 8 Փ. 32, Հեռ. (255)6-03-23*


# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 դեկտեմբերի *2014 թվականի* N 31

## <<ՋՐԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ <<ՋՐԱՇԵՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 63-րդ հոդվածի առաջին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 14-րդ կետով և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի հինգերորդ մասի, 24-րդ հոդվածի առաջին մասի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. <<Ջրաշենի գյուղական բժշկական ամբուլատորիա>> փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ ՓԲԸ) վերակազմավորման ձևով վերակազմակերպել << Ջրաշենի բժշկական ամբուլատորիա>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ ՀՈԱԿ)։
2. Համայնքի ղեկավարին՝
    1) Մեկամսյա ժամկետում կազմել և հաստատել ՓԲԸ վերակազմավորման կարգը, պայմանները, տեղաբաշխված բաժնետոմսերի և այլ արժեթղթերի փոխարկման կարգը.
    2) Հաստատել ՓԲԸ գույքի և գույքային իրավունքների՝ ՀՈԱԿ-ին փոխանցման ակտը, որում առկա են վերակազմակերպվող ընկերության գույքի և պարտատերերին ու պարտապաններին վերաբերող բոլոր պարտավորությունների իրավահաջորդության մասին դրույթներ.
    3) Կազմել համայնքային կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և ամրացվող՝ համայնքին պատկանող գույքի կազմը և ներկայացնել ավագանու հաստատմանը։
    4) Կայացնել ՀՈԱԿ-ի ստեղծման մասին որոշումը.
    5) Կազմված ՀՈԱԿ-ի կանոնադրության նախագիծը։

3. Կազմակերպության կառավարման, ինչպես նաև՝ «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի երկրորդ մասի «է» ենթակետով ու 14-րդ հոդվածով նախատեսված լիազորությունները վերապահել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ջրաշեն գյուղական համայնքի ղեկավարին։
4. ՓԲԸ տնօրենին՝ ընկերության պարտատերերի առկայության դեպքում բոլորին օրենքով սահմանված կարգով ծանուցել ընկերության վերակազմավորման մասին։

Կողմ (6) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ՀՈՒՍԻԿ ԹՈՎՄԱՍՅԱՆ

ԶԱՎԵՆ ՏՈՆԻԿՅԱՆ

ԿԱՐԱՊԵՏ ՈՒՌՈՒՍՅԱՆ

ՀՐԱՉՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՄԱՐՏԻՆ ԴԱՎԹՅԱՆ

ՀԱՅԿ ԽԱԼԱԹՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՈՒՌՈՒՍՅԱՆ